Իւրաքանչիւր դրամագլխի բերած տոկոսիքը առանձին առանձին չը հաշուելու համար, գտնում են միայն տոկոսի թիւերը յօգուտ բանկի և գետեղում են նոցա Պարտք երեսի վերայ, նշանակած գաւազանի մէջ։

Այդպէս ուրեմն, № 5 օրինակում Պարտքի տոկոսի թիւերը ունեն հակառակ նշանակութիւն, այսինքն նոքա հաշուած են յօգուտ բանկի և ոչ թէ յօգուտ դրամատէրի։

Դիմելով Պահանջք երեսին, կը տեսնենք, որ 2000 մանէթը դրամատէրը ստացել է բանկից 5 Փետրվարի. քանի որ վերև յայտնած պայմանի համեմատ այդ գումարը նա պէտք է ստանար 1 Յունուարի, ուրեմն բանկը վճարել է 2000 մ. պայմանաժամից 35 օր ուշ։ Նայելով նոյն դասաւորութիւնը կը գտնենք. որ 1000 մանէթը 55 օրով է ուշ ստացուած, 500 ման.—80 օրով, միւս 500 մանէթը—115 օրով և վերջին 500 մանէթը 160 օրով։ Պարզ է, որ այդ գումարների բերած տոկոսիքը պէտք է ստանայ դրամատէրը, հետևաբար և Պահանջք երեսի տոկոսի թիւերը նոյնպէս հակառակ նշանակութիւն ունեն, այսինքն հաշվում են յօգուտ դրամատիրոջ և ոչ թէ յօգուտ բանկի, ինչպէս № 4 օրինակում։

Դիցուք թէ 30 Յունիսի կամենում ենք ընթացիկ հաշիւը փակել։ Որպա համար իմանում ենք նախ և առաջ բանկը տարած և բանկից ստացած փողի քանակութիւնը, որպէս զի տեսնենք թէ հաշուի փակման օրը ով ումն է պարտական մնում։

Օրինակից երևում է, որ բանկը ստացել է գրամատէրից (4500+2500+1500)=8500 ման., իսկ յետ է դարձրել միայն (2000+1000+500+500+500)=4500 մանէթ։ Ուստի բանկը պարտ է մնում գրամատէրին 4000 մանէթ։ Մեր վերոյիշեալ ենթադրութեանը համաձայն այդ գումարը պէտք է վճարուած լինէր 1 Յունվարի 1881 թ., կը նշանակի ուրեմն որ 30-ին Յունիսի արդէն պայմանաժամից 180 օր անցել է։

Որովհետև տոկոսի թուերը յօգուտ գրամատիրոջ գրուած են Պահանջքի մէջ, ուստի 4000 մանէթի համապատասխան տոկոսի թիւը (4000×180=720,000) արձանագրվում է Պահանջք երեսի վերայ։ Դորանից յետոյ գումարում են իւրաքանչիւր երեսի տոկոսի թուերը առանձին, առանձին, հանում են մեծ գումարը փոքրից և ստացած մնացորդով (670,000) հաւասարեցնում են տոկոսի թուերը։

Տարբերութիւնից հաշվում են շահ $\frac{670000\times4}{100\times360}$=74 մ. 44 կ.

որը աւելացնում են Պարտքի գումարի վերայ, պատճառ որ այդ մնացորդը ստացուած է Պահանջք երեսից, ուր տոկոսի թուերը ներկայացնում են գրամատիրոջ պատկանելի տոկոսիքը։ Վերջապէս գուրս են բերում գրամագլխի մնացորդը. նորանով հաւասարեցնում են երկու կողմի գումարները և ապա հաշիւը փակվում է սովորական կերպով։ Բոլոր յիշուած գործողութիւնները կատարելուց յետ, կը ստանանք՝ որ 30 Յունիսի բանկը պարտ է մնում գրամատէրին 4074 մ. 44 կ.։

Նոյն եզրակացութեան հասել էինք մենք և բոլոր միւս տեսակ ընթացիկ հաշիւներում, գոցանից լաւագոյնը ընտրելը կախուած է յարմարութիւնից։

Եթէ հարկաւոր լինէր փակել հաշիւը որ և իցէ ուրիշ

օր, դիցուք 15 Մայիսի, այն ժամանակ առաջուց հաշված բոլոր օրերը և տոկոսի թուերը կը մնային անփոփոխ, միայն բանկի պարտքը այդ օրը կը լիներ 3500 մ., որից լոգուտ գրամատիրոջ պէտք է հաշուել ոչ թէ 180, այլ 135 օրուայ շահը։

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՒ ԿԱՐՄԻՐ % ԹՈՒԵՐՈՎ.

Ընթացիկ հաշիւները պատահում են ոչ թէ միայն բանկերի, այլ և մասնաւոր անձանց հետ։ Այդ դիպուածներում ընթացիկ հաշիւը գրեթէ չէ զանազանվում մինչև այժմ պահած բանկի հաշիւներից. դոյա միակ տարբերութիւնը այն է, որ անձնական ընթացիկ հաշիւներում արձանագրվում են ոչ միայն նագդ (կանխիկ) փողով ստացուած ու տուած գումարները, այլ նաև այնպիսի գումարներ, որոնք ստացուած կամ տուած են ապրանքով, մուրհակով, փոխանակագրով և այլն։

Անձնական ընթացիկ հաշուի գրելու ձևը պարզապէս երևում է № 6 և № 7 օրինակներից. այդ վերջին օրինակը կազմուած է տոկոսների ստուգանարար հաշուարարութեան եղանակով։

Պատահում է, որ անձնական ընթ. հաշիւներում մուտք են գործում այնպիսի գումարներ, որոնք դեռ իսկապէս ոչ վճարված են և ոչ ստացուած և որոնց ստացման ու վճարման պայմանաժամը լրանում է միայն հաշուի փակման օրից յետոյ։ Այդ տեսակ գումարների համար թէ օրերի համարանքը և թէ տոկոսի թուերի հաշուարարութիւնը առանձին կերպով է կատարվում. դոյա տոկոսի թուերը գրվում են հաշուի մէջ կարմիր թանաքով, որպէս զի զանազանուեն միւս տոկոսի թուերից և այդ իսկ պատճառով հաշիւը կոչվում է ընթացիկ հաշիւ էքսդէր % Ռուբրով։

Բացատրենք կարմիր % թուերի հաշուարարութիւնը № 8 օրինակի վերայ։

Ապրիլի 20-ին մենք տալիս ենք Յովհաննէս Մելքումեանցին 2500 մանէթի մուրհակ 3 ամիս պայմանաժամով։ Նա այդ մուրհակի գումարը կը ստանայ միայն Յուլիսի 30-ին, այսինքն 30 օր հաշուի փակումից յետոյ։ Արձանագրելով 30 օրը օրերի գաւազանի մէջ, մենք ենթադրում ենք, որ 2500 մանէթը Մելքումեանցը պէտք է ստանար մեզնից 30-ին Յունիսի (փակման օրը). բայց քանի որ նա մուրհակի փոխ պայմանաժամից 30 օր ուշ է ստանում, ուստի մենք պարտ ենք վճարել Մելքումեանցին 2500 մանէթի 30 օրուայ շահը։ Բազմապատկելով 30 օրը 2500 մանէթի վերայ՝ կը գտնենք յօգուտ Մելքումեանցի տոկոսի թիւ 75000, որը գրում ենք Պարտք երեսի նշանակուած գաւազանի մէջ։ Որովհետև Պարտք երեսի միւս տոկոսի թուերը, բացի 75000-ից, մեզ են պատկանում, այդ պատճառաւ վերջի թիւը գանձանուեան համար գրվում է կարմիր թանաքով։

Անցնելով Պահանջք երեսին, կը տեսնենք որ այստեղ էս կան երկու գումարներ, որոնց պայմանաժամը լրանում է միայն ընթացիկ հաշուի փակման օրից յետոյ։ Ի նկատի ունենալով վերև յայտնած ենթադրութիւնը, կը գտնենք, որ մենք 1000 մանէթը 50 օր պայմանից ուշ ենք ստանում, իսկ 1500 » 25 » » » » ստանում։ Այդ գումարներին համապատասխան % թուերը գրվում են նոյնպէս կարմիր թանաքով և ունեն նոյն հակառակ նշանակութիւնը, ինչպէս և յետընթաց ընթացիկ հաշում։

Հաշուի փակումն հետևեալ կերպով է կատարվում։ Կարմիր % թուերի գումարը մեր օգտին = 87500
Իսկ նոյն գումարը յօգուտ Մելքումեանցի = 75000
Տարբերութիւնը մեր օգտին . . . . = 12500

Կարմիր % թուերի մէջ հաւասարակշռութիւն պահպանելու համար, գրում ենք 12500-ը կարմիր թանաքով Պարտք երեսի վերայ, բայց որպէս զի նոյն % թիւը մեր օգտին հաշուենք, գրում ենք նորան էս սև թանաքով։ Դորանից յետոյ

հաշիւը սովորական եղանակով է փակվում՝ գումարում ենք Պարտքի և Պահանջքի սև տոկոսի թուերը առանձին առանձին, փոքր գումարը հանում ենք մեծից և տարբերութիւնը 143500, հաշուի հաւասարակշռութեան համար, գրում ենք հակառակ երեսի վերայ (մեր օրինակում Պահանջքի մէջ)։

Մնացորդից հաշւում ենք տոկոսիքը $\frac{143500 \times 6}{360 \times 100} = 23$ մ. 92 կ. որը, իբրև մեզ պատկանելի գումար, արձանագրում ենք Պարտքի մէջ։ Վերջապէս գուրս բերելով գրամագլխի մնացորդը (5023 մ. 92 կ.), նորանով հաւասարեցնում ենք երկու երեսի գրամագլխի գումարները։

Եթէ կամենալինք միևնոյն ընթացիկ հաշիւը լուծել զեղջման եղանակով, այն ժամանակ հաշիւը կազմվում է առանց կարմիր % թուերի օգնութեան։ Ինչպէս կարելի է տեսնել ներքև զետեղած № 9 օրինակից, օրերի համարանքը դորա մէջ կատարվում է սովորական կերպով, այսինքն հաշուի սկզբնական օրից մինչև իւրաքանչիւր գումարի ստացման կամ վճարման օրը, օրինակ Յունուարի 1-ից մինչև Յուլիսի 30-ը—210 օր է, մինչև Օգոստոսի 20-ը—230 օր է, մինչև Յուլիսի 20-ը—205 օր է։ Իսկ դորա փակելու ձևը բոլորովին չէ տարբերվում մեր տեսած յետընթաց ընթացիկ հաշուից (տես օրինակ № 5)։

* *
*

Վաճառականութեան մէջ պատահում են և երկու ուրիշ տեսակ ընթացիկ հաշիւներ՝ 1) երբ Պարտքի և Պահանջքի գումարների բերած շահը զանազան տոկոսիքով են հաշւում, 2) երբ տոկոսիքը մինչև հաշուի փակման օրը փոփոխութեան է ենթարկվում։ Առաջին դէպքում, ինչպէս կը տեսնուի № 10 օրինակից, ուր Պարտք երեսի գումարները հաշուած են 6%-ով, իսկ Պահանջքի գումարները 4%-ով, ընթացիկ հաշիւը պատրաստվում է տոկոսների ստոիճանաբար հաշուարարութեան եղանակով։

Փակման օրը դուրս են բերում տոկոսների մնացորդը։ Յետոյ աւելացնելով այդ մնացորդը գրամագլխի մնացորդի վերայ, փակում են հաշիւը սովորական կերպով։

Բացատրենք այժմ թէ ինչպէս է կատարվում ընթացիկ հաշուի հաշուարարութիւնը երկրորդ դէպքում։ № 11-դ օրինակը ներկայացնում է ալ. Մինաս Պետրոսեանցի ընթացիկ հաշիւը առևտրական բանկում, որը փակուած է 30 Յունիսի 1881 թուի, հաշուելով մինչև 20 Ապրիլի $3^1/_2$%, իսկ Ապրիլի 20-ից—4%-ով։ Օրերի և տոկոսի թուերի հաշուարարութիւնը կատարվում է սովորական եղանակով։ Տոկոսի փոփոխութեան օրը (մեր օրինակում 20 Ապրիլի) դուրս են բերում թէ գրամագլխի և թէ տոկոսի թուերի մնացորդը, որը զանազանութեան համար, գրվում է կարմիր թանաքով։

Գտնում են լեռոյ 4% թուերի տարբերութիւնը (56100) որը կշիռ տալու համար գրվում է նոյնպէս կարմիր թանաքով Պարտք երեսի վերայ։

30 Յունիսի, այսինքն փակման օրը, գումարում են Պարտք և Պահանջք երեսների գրամագլուխները առանձին առանձին, և հանելով փոքր գումարը մեծից, իմանում են, թէ որքան փող է մնացել բանկում։ Ստացած տարբերութիւնը (3085 ման.) արձանագրում են հաշուի հաւասարակշռութեան համար Պարտքի մէջ և նոյն տարբերութիւնը նոր հաշուին է անցնում։ Գրամագլխի մնացորդի վերայ աւելացնում են տոկոսիքը հետևեալ կերպով՝ հաշվում են Ապրիլի 20-ից մնացած 1835 մանէթի 70 օրուայ շահը $^1/_2$%-ով, պատճառ որ այդ օրից սկսեալ Պետրոսեանցի գրամագլուխը բերում է ոչ թէ $3^1/_2$%, այլ 4%։ 20 Ապրիլի տոկոսի թուերի մնացորդից (308600) հաշվում են $3^1/_2$% լօգուտ Պետրոսեանցի և վերջապէս հաշվում են նոյնպէս լօգուտ գրամատէրի 4% 30-ին Յունիսի տոկոսի թուերի տարբերութիւնից (56100)։ Ահա այդ հաշուարարութիւնները՝

Յուլիսի 1-ին գրամագլխի մնացորդը . . . . . 3085 մ. —
1835 մ. $^1/_2$%-ով 70 օրուայ շահը = 1 մ. 78 կ.

$3^1/_2$% . . . . $\frac{308600 \times 7}{2 \times 360 \times 100} = 30$ մ. —

4% . . . . . $\frac{56100 \times 4}{360 \times 100} = 6$ մ. 23 կ. 38 մ. 01 կ.

Ընդամենը 3123 մ. 01 կ.

Վերև ցոյց տուած հաշուարարութիւնը ստուգելու համար, կարելի է նոյն ընթացիկ հաշիւը լուծել ուրիշ աւելի պարզ եղանակով։ Դա կայանում է նորանում, որ 20 Ապրիլի, այսինքն այն օրը, երբ տոկոսիքը փոփոխվում է, փակում են հաշիւը սովորական առաջընթաց եղանակով. լեռոյ այդ օրից սկսած կազմում են նոր հաշիւ և փակում են նորան 30 Յունիսի։

№ 12-դ օրինակը այդ կերպով պատրաստուած ընթացիկ հաշիւ է ներկայացնում։ Դորանից երևում է, որ բանկը պարտ է մնում գրամատէրին 3123 ման. 01 կոպ., ուրեմն այդ եղանակով էլ առաջուայ եզրակացութեանն ենք հասնում։

№ 13-դ օրինակը ներկայացնում է № 11-դ հաշուի շարունակութիւնը, սկսեալ Յուլիսի 1-ից մինչև Դեկտեմբերի 31-ը։ Տոկոսիքը դորա մէջ փոփոխութեան է ենթարկվում 25 Սեպտեմբերի մինչև այդ օրը հաշուարարութիւնը կատարվում է 5%-ով, իսկ այդ օրից սկսած—4%-ով։ № 14-դ օրինակում նոյն հաշիւը փակուած է սովորական եղանակով երկու անգամ, այն է 25 Սեպտեմբերի և 31 Դեկտեմբերի։

Օրերի համարանքը ընթ. հաշիւներում հեշտացնելու համար ծառայում է ներքև զետեղուած աղիւսակը։ Դորա օգնութեամբ ամենագիւրին կերպով կարելի է որոշել այն ժամանակամիջոցը, որ անցել է մէկ օրից մինչև միւս օրը։ Օրինակ, որքան օր է անցել Փետրուարի 17-ից մինչև Հոկտեմբերի 22-ը։ Այդ խնդիրը լուծելու համար, որոնում ենք 17-ը առաջին ուղղահայեաց տողում և նայում ենք թէ որտեղ է հորիզոնական

տողը, որ 17-ից սկսելով կարում է Փետրուար ամսուայ տողին. ահա այդ երկու գծերի կտրած տեղում գտնում ենք 47-ը,—գրանից յետոյ որոնում ենք 22-ը առաջին ուղղահայեաց տողում և Հոկտեմբեր ամիսը հորիզոնական տողում և այդ երկու գծերի կտրած տեղում գտնում ենք 292-ը,— հանելով 47-ը 292-ից կը ստանանք 245, որը ցոյց է տալիս թէ որքան օր է անցել Փետրուարի 17-ից մինչև Հոկտեմբերի 22-ը։

Վերցնենք մի ուրիշ օրինակ։ Դիցուք տուած է մեզ որոշել օրերով այն ժամանակամիջոցը, որ անցել է 1880 թուականի Նոյեմբերի 3-ից մինչև 1881 թուի Մայիսի 12-ը։

Նախ և առաջ իմանում ենք, թէ որքան օր է անցել 1880 թուականի Յունուարի 1-ից մինչև նոյն թուականի Նոյեմբերի 3-ը. դորա համար աղիւսակում պէտք է նայել թէ 3-ով սկսուող հորիզոնական տողը որտեղ է կտրում Հոկտեմբեր ամսուայ ուղղահայեաց տողին. ահա այդ երկու գծերի կտրած տեղում գտնում ենք 303, որը դուրս գալով 360-ից, ստանում ենք 57,—այդ թիւը գումարում ենք 132-ի հետ, որը գտնում ենք վերև ցոյց տուած եղանակով, ալսինքն այն տեղում, ուր 12-ով սկսուող հորիզոնական տողը կտրում է Մայիս ամսուայ ուղղահայեաց տողին։ Գումարման գործողութիւնից ստանում ենք 189, որը ցոյց է տալիս նոյնպէս, թէ որքան օր է անցել Նոյեմբերի 3-ից մինչև Մայիսի 12-ը։

Միւս աղիւսակը, որ կոչվում է [illegible], պարունակում է իւր մէջ այն թուերը, որոնց վերայ պէտք է բաժանել ընթացիկ հաշիւների տոկոսի թուերը, որպէս զի ստացուի համապատասխան տոկոսիքը։ Դիցուք հարկաւոր է իմանալ թէ որքան շահ կը ստացուի 18500 մանէթից 145 օրուայ մէջ, հաշուելով $8^1/_2$%։

Բազմապատկելով 18500 մանէթը 145-ի վերայ՝ կը ստանանք 2682500 (% թիւ). այդ թուից տոկոսիքը իմանալու

ԱՂԻԻՍԱԿ ՕՐԵՐԻ Հ

ՀԱՇՈՒԵԼՈՎ ԻՐԱՔԱՆՉԻՐ ԱՄ

	Յունվար.	Փետրվար.	Մարտ.	Ապրիլ.	Մայիս.	Յունիս.
ՕՐԸՆԴԱՀԱՏԱՑԵԼՈՒՔԱՑ	1	31	61	91	121	151
	2	32	62	92	122	152
	3	33	63	93	123	153
	4	34	64	94	124	154
	5	35	65	95	125	155
	6	36	66	96	126	156
	7	37	67	97	127	157
	8	38	68	98	128	158
	9	39	69	99	129	159
	10	40	70	100	130	160
	11	41	71	101	131	161
	12	42	72	102	132	162
	13	43	73	103	133	163
	14	44	74	104	134	164
	15	45	75	105	135	165
	16	46	76	106	136	166
	17	47	77	107	137	167
	18	48	78	108	138	168
	19	49	79	109	139	169
	20	50	80	110	140	170
	21	51	81	111	141	171
	22	52	82	112	142	172
	23	53	83	113	143	173
	24	54	84	114	144	174
	25	55	85	115	145	175
	26	56	86	116	146	176
	27	57	87	117	147	177
	28	58	88	118	148	178
	29	59	89	119	149	179
	30	60	90	120	150	180

ՄԱՐԱՆՔԻ ՀԱՄԱՐ

ՕՐ=30 ՕՐ, ԵՒ ՏԱՐԻՆ=360 ՕՐ։

Յունիս.	Օգոստոս.	Սեպտեմբեր.	Հոկտեմբեր.	Նոյեմբեր.	Դեկտեմբեր.
181	211	241	271	301	331
182	212	242	272	302	332
183	213	243	273	303	333
184	214	244	274	304	334
185	215	245	275	305	335
186	216	246	276	306	336
187	217	247	277	307	337
188	218	248	278	308	338
189	219	249	279	309	339
190	220	250	280	310	340
191	221	251	281	311	341
192	222	252	282	312	342
193	223	253	283	313	343
194	224	254	284	314	344
195	225	255	285	315	345
196	226	256	286	316	346
197	227	257	287	317	347
198	228	258	288	318	348
199	229	259	289	319	349
200	230	260	290	320	350
201	231	261	291	321	351
202	232	262	292	322	352
203	233	263	293	323	353
204	234	264	294	324	354
205	235	265	295	325	355
206	236	266	296	326	356
207	237	267	297	327	357
208	238	268	298	328	358
209	239	269	299	329	359
210	240	270	300	330	360

ԲԱԺԱՆԱՐԱՐՆԵՐԻ ԱՂԻՒՍԱԿ

%	Բաժանարար.	%	Բաժանարար.	%	Բաժանարար.	%	Բաժանարար.
1/4	144,000	2 2/3	13,500	5	7,200	7 1/3	4,909
1/3	108,000	2 3/4	13,090	5 1/4	6,857	7 1/2	4,800
1/2	72,000	3	12,000	5 1/3	6,750	7 2/3	4,696
2/3	54,000	3 1/4	11,076	5 1/2	6,545	7 3/4	4,645
3/4	48,000	3 1/3	10,800	5 2/3	6,352	8	4,500
1	36,000	3 1/2	10,285	5 3/4	6,260	8 1/4	4,364
1 1/4	28,800	3 2/3	9,818	6	6,000	8 1/3	4,320
1 1/3	27,000	3 3/4	9,600	6 1/4	5,760	8 1/2	4,235
1 1/2	24,000	4	9,000	6 1/3	5,684	8 2/3	4,154
1 2/3	21,600	4 1/4	8,470	6 1/2	5,538	8 3/4	4,114
1 3/4	20,571	4 1/3	8,307	6 2/3	5,400	9	4,000
2	18,000	4 1/2	8,000	6 3/4	5,333	10	3,600
2 1/4	16,000	4 2/3	7,714	7	5,142	11	3,273
2 1/3	15,428	4 3/4	7,578	7 1/4	4,966	12	3,000
2 1/2	14,400						

համար պէտք է նորան բազմապատկել $8^1/_2$-ի վերայ և ապա ստացած արտադրեալը բաժանել 100×360 վերայ=

$$\frac{2682500\times17}{2\times360\times100}=633 \text{ մ. } 41 \text{ կոպ.։}$$

Բայց բաժանարարների աղիւսակի օգնութեամբ նոյն խնդիրը կարելի է լուծել և ուրիշ աւելի հեշտ կերպով։ Դորա համար որոնում են աղիւսակի մէջ $8^1/_2$ պրոցէնտի համապատասխան բաժանարարը՝ 4235 և յետոյ դորա վերայ բաժանում են վերև տուած տոկոսի թիւը, կը գտնենք՝

$$\frac{2682500}{4235}=633 \text{ մ. } 41 \text{ կոպէկ։}$$

Վերցնենք մի այլ խնդիր. որքան շահ կը տայ 7500 մ. եթէ տուած է 174 օր ժամանակով և $6^2/_3\%$։

Նախ և առաջ գտնում ենք տոկոսի թիւը. բազմապատկելով 7500 մանէթը 174-ի վերայ, կը ստացուի 1305000, յետոյ, ինչպէս յայտնի է, պէտք է այդ թիւը բազմապատկենք հետևեալ ձևակերպութեան վերայ

$$\frac{20}{3\times360\times100}=\frac{20}{108000}$$

այդ վերջին կոտորակը կրճատվում է 20-ի վերայ, ուրեմն ստանում ենք՝

$$\frac{1}{5400},$$ որի վերայ պէտք է բազմապատկել 1305000-ը. իսկ ամբողջ թիւը կոտորակի վերայ բազմապատկելու համար, հարկաւոր է ամբողջը բազմապատկել համարիչի վերայ և թողնել մի և նոյն յայտարարը, ուստի

$$1305000\times\frac{1}{5400}=\frac{1305000}{5400}$$

կատարելով բաժանման գործողութիւնը, կը ստանանք՝ 241 ման. 67 կոպէկ։

Նոյն եզրակացութեան կը հասնենք, եթէ դիմենք բաժանարարների աղիւսակին։ Աղիւսակից երևում է, որ $6^2/_3$ պրո-

ցէնտի համապատասխան բաժանարարը 5400-ն է, այսինքն նոյն թիւը, որի վերայ մենք վերև բաժանեցինք տուած տոկոսի թիւը։

Ցոյց տուած դատողութիւնների վերայ հիմնուելով, կազմուած է մեր բաժանարարների աղիւսակը. դորա և նախորդ աղիւսակի օգնութեամբ, ընթացիկ հաշիւների հաշուարարութիւնը նշանաւոր կերպով դիւրանում է։

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՒՆԵՐԻ

ՕՐԻՆԱԿՆԵՐ

№ 1

ՄՈՒՏՔ			ՀԱՇԻՒ	
1881				
Յունվ.	10	Դրամարկղում կայ	4500	—
Փետր.	15	Ստացուած է կանխիկ ծախսուած ապրանքի համար	2500	—
Մարտ.	10	Ստացուած է պարոն Սարգիս Մինասեանից.	1500	—
			8500	—
1881				
Յուլիս	1	Մնացորդ հին հաշուից	4000	—

ԴՐԱՄԱՐԿՂԻ ԵԼՔ

1881				
Փետր.	5	Տուած է կանխիկ գնած ապրանքի համար .	2000	—
»	25	Տուած է պարոն Սարգիս Մինասեանցին . .	1000	—
Մարտ	20	Տուած է նոյն պարոնին	500	—
Ապրիլ	25	Մախս տան և առևտուրի համար	500	—
Յունիս	10	Վճարուած է պարոն Պետրոսեանցին. . . .	500	—
»	30	Դրամարկղի մնացորդը.	4000	—
			8500	—

№ 2

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՒ ԲԱՆԿՈՒՄ

ՀԱՇԻՒԸ ՓԱԿՈՒԱԾ Է 30-ԷՆ ՅՈՒՆԻՍԻ, 4%-ՈՎ.

Ամիս	Թիւ		Դրամագլուխ			Օր	Տոկոսք	
1881								
Յուն.	10	Տարուած է բանկը	4500	—	մինչև 5 Փետր.	25	12	50
Փետր.	5	Ստացուած է բանկից	2000	—				
»	5	Մնացորդ	2500	—	մինչև 15 »	10	2	78
»	15	Տարուած է . . .	2500	—				
»	15	Մնացորդ	5000	—	մինչև 25 »	10	5	55
»	25	Ստացուած է . .	1000	—				
»	25	Մնացորդ	4000	—	մինչև 20 Մարտի	25	11	11
Մարտ	20	Ստացուած է . .	500	—				
»	20	Մնացորդ	3500	—	մինչև 25 Ապրիլի	35	13	61
Ապրիլ	25	Ստացուած է . .	500	—				
»	25	Մնացորդ	3000	—	մինչև 10 Մայիսի	15	5	—
Մայիս	10	Տարուած է . . .	1500	—				
»	10	Մնացորդ	4500	—	մինչև 10 Յունիսի	30	15	—
Յունիս	10	Ստացուած է . .	500	—				
»	10	Մնացորդ	4000	—	մինչև 30 »	20	8	89
»	30	Բանկից առնելիք շահը	74	44			74	44
		Կը մնայ ի նոր հաշիւ	4074	44				
1881								
Յուլիս	1	Բանկի պարտքը հին հաշուից	4074	44				

№ 7

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՒ ՏՈԿՈՍՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ՀԱՇՎԻԱՐԱՐՈՒԹԵԱՄԲ, ՈՐ ՓԱԿՈՒԱՆ Է 30-ԷՆ ՅՈՒՆԻՍԻ, 6%-ով.

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՒ Պ. ՍԱՐԳԻՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ:

Ամիս	թիւ		Դրամագլուխ.		%	Տալիք % թիւ	Առնելիք % թիւ
1881							
Յունվ.	2	Ստացուած է Զեղնից կանխիկ դրամ	10000	—	8	—	80000
»	10	Մատուցած է Զեզ ապրանք . .	1000	—			
			9000	—	45	—	405000
Փետր.	25	Տուած է Զեզ կանխիկ դրամ . .	5000	—			
			4000	—	15	—	60000
Մարտ	10	Վաճառուած է Զեզ ապրանք .	3000	—			
			1000	—	40	—	40000
Ապրիլ	20	Վճարուած է պ. Պետրոսեանցին Զեր հրամանի համեմատ . .	2000	—			
			1000	—	5	5000	—
»	25	Ստացուած է Զեզնից կանխիկ դրամ	8000	—			
			7000	—	60	—	420000
Յունիս	25	Տուած է Զեզ կանխիկ դրամ .	1000	—			
»	30	Մնացորդ դրամագլխի	6000	—	5	—	30000
		Առ. % $\frac{1035000\times6}{360\times100}$ = 172 մ. 50 կ.				5000	1035000
		Տալիք % $\frac{5000\times6}{360\times100}$ = — 83 կ.					
		Մնացորդ %-ի . . . 171 մ. 67 կ.	171	67			
Յունիս	30	Մնացորդ ի նոր հաշիւ	6171	67			

№ 3. Հաշիւը փակուած է 30-ին Յունիսի, 4%-ով։

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՒ

ՊԱՐՏՔ

Ամիս	Թիւ		Դրամագլուխ.		Օր	Տոկոսք	
1881							
Յունվ.	10	Տարուած է բանկը	4500	—	170	85	—
Փեբր.	15	» »	2500	—	135	37	50
Մարտ	10	» »	1500	—	50	8	33
Յունիս	30	Մնացորդ տոկոսների	74	44			
			8574	44		130	83
1881							
Գուլիս	1	Մնացորդ հին հաշուից	4074	44			

ԲԱՆԿՈՒՄ

ՊԱՀԱՆՋԳԻ

Ամիս	Թիւ		Դրամագլուխ		Օր	Տոկոսք	
1881							
Փետր.	5	Ստացուած է բանկից	2000	—	145	32	22
»	25	» »	1000	—	125	13	89
Մարտ	20	» »	500	—	100	5	56
Ապրիլ	25	» »	500	—	65	3	61
Յունիս	10	» »	500	—	20	1	11
»	30	Կշիռ տոկոսների				74	44
»	30	» դրամագլխի	4074	44			
			8574	44		130	83

№ 4. Ուղիղ կամ առաջընթաց ընթացիկ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ ԱՌԵՎ

ՊԱՐՏՔ

Ամիս	Թիվ		Պայմանագրում *)		Դրամագլուխ		Օր	% Թիվ
1881								
Յունվար	10	Տարուած է բանկը . . .	Յունվար	10	4500	—	170	765000
Փետրվ.	15	» » . . .	Փետրվ.	15	2500	—	135	337500
Մայիս	10	» » . . .	Մայիս	10	1500	—	50	75000
Յունիս	30	Մնացորդ %-ի $\frac{670000\times4}{100\times360}$			74	44		
					8574	44		1177500
1881								
Զուլիս	1	Մնացորդ հին հաշուից . .			4074	44		

*) Այդ սխալների մէջ գրվում է այն օրուայ թիւը, ինչ օրից որ պէտք է սկսել օրերի լինելիքն՝ Յունվարի 11, Փետրվարի 16 և Մայիս 11, որովհետև բանկը իւր տուացած փոխ այդ պայմանը՝ փոփոխուելիան կենթարկուին Գարտք երեսի թիվ օրերը և թիվ տարի

...աշիւ, որ փակուած է 30-ին Յունիսի, 4%-ով։

...ՊԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ

ՊԱՀԱՆՋԳԻ

Ամիս	Թիւ		Պայմանաժամ		Դրամագլուխ		Օր	% թիւ
1881								
Փետր.	5	Ստացուած է բանկից . .	Փետր.	5	2000	—	145	290000
»	25	» » . .	»	25	1000	—	125	125000
Մարտ	20	» » . .	Մարտ	20	500	—	100	50000
Ապրիլ	25	» » . .	Ապրիլ	25	500	—	65	32500
Յունիս	10	» » . .	Յունիս	10	500	—	20	10000
»	30	Կշիռ. % թուերի						670000
»	30	Մնացորդ ի նոր հաշիւ . .			4074	44		
					8574	44		1177500

...համարները և տակուների հաշուարարութիւնը։ Իսկապէս այդ սիւնակի թուերը պէտք է ...տալը հաշուում է ոչ թէ նոյն իսկ տարուան, այլ հետևեալ օրէց։ Ի նկատի ունենալով ...թուերը։

№ 5. Անուղիղ կամ լեռբնթաց ընթացիկ հա

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՒ

ՊԱՐՏՔ

Ամիս	Թիւ		Պայմանաժամ		Դրամագլուխ		Օր	% Թիւ
1881								
Յունվար	10	Տարուած է բանկը . . .	Յունվար	10	4500	—	10	45000
Փետր.	15	» » . . .	Փետր.	15	2500	—	45	112500
Մայիս	10	» » . . .	Մայիս	10	1500	—	130	195000
Յունիս	30	Կշիռ %ի Թուերի						670000
»	30	Մնացորդ %-ի $\frac{670000\times4}{360\times100}$			74	44		
					8574	44		1022500
1881								
Յուլիս	1	Մնացորդ հին հաշուից . .			4074	44		

շիւ, որ փակուած է 30-ին Յունիսի, 4%-ով

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ

ՊԱՀԱՆՋԿ

Ամիս	Թիւ		Պայմանաժամ		Դրամագլուխ		Օր	% Թիւ
1881								
Փետր.	5	Ստացուած է բանկից . .	Փետր.	5	2000	—	35	70000
»	25	» » . .	»	25	1000	—	55	55000
Մարտ	20	» » . .	Մարտ	20	500	—	80	40000
Ապրիլ	25	» » . .	Ապրիլ	25	500	—	115	57500
Յունիս	10	» » . .	Յունիս	10	500	—	160	80000
»	30	Մնացորդ դրամագլխեբի.						
		4000 ման.					180	720000
»	30	Մնացորդ ի նոր հաշիւ . .			4074	44		
					8574	44		1022500

№ 6. Հաշիւը փակուած է 30-ին Յունիսի, 6%-ով։

ԸՆԹԱՑԻԿ

Պ. ՍԱՐԳԻՍ

ՊԱՐՏՔ

Ամիս	Թիւ		Դրամագլուխ		Օր	% Թիւ
1881						
Յունվար	10	Մախուած է Զեզ ապրանք . .	1000	—	170	170000
Փետր.	25	Տուած է Զեզ կանխիկ դրամ .	5000	—	125	625000
Մարտ	10	Վաճառուած է Զեզ ապրանք .	3000	—	110	330000
Ապրիլ	20	Վճարուած է պ. Պետրոսեանցին Զեր հրամանի համեմատ . .	2000	—	70	140000
Յունիս	25	Տուած է Զեզ կանխիկ դրամ .	1000	—	5	5000
»	30	Կշիռ % Թուերի				1030000
»	30	Մնացորդ է նոր հաշիւ	6171	67		
			18171	67		2300000

ՀԱՇԻՒ

ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑԻ

ՊԱՀԱՆՋԻՑ

Ամիս	Թիւ		Դրամագլուխ		Օր	% թիւ
1881						
Յունվար	2	Ստացուած է Զեզնից կանխիկ դրամ	10000	—	178	1780000
Ապրիլ	25	Ստացուած է Զեզնից կանխիկ դրամ	8000	—	65	520000
Յունիս	30	Մնացորդ %-ի $\frac{1030000 \times 6}{360 \times 100}$ . .	171	67		
			18171	67		2300000
1881						
Յուլիս	1	Մնացորդ հին հաշուից	6171	67		

№ 8. Ընթացիկ հաշիւ կարմիր % թուե

ԸՆԹԱՑԻԿ

Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ

ՊԱՐՏՔ

Ամիս	Թիւ		Պայմանաժամ		Դրամագլուխ		Օր	% Թիւ
1881								
Յունվար	10	Մախսուած է Ձեզ ապրանք	Յունվար	10	3000 —		170	510000
Փետրվ.	25	Տուած է Ձեզ կանխիկ դրամ	Փետրվ.	25	8000 —		125	1000000
Ապրիլ	20	Տուած է Ձեզ մուրհակ 3 ամիս պայմանաժամով.	Յուլիս *)	30	2500 —		30	**) 75000
Մայիս	5	Վճարուած է Ձեր հրամանի համեմատ	Մայիս	5	1500 —		55	82500
»	25	Մախսուած է Ձեզ ապրանք	»	25	2000 —		35	70000
Յունիս	30	Կշիռ կարմիր % թուերի .						12500
								12500
»	30	Մնացորդ %-ի $\frac{143500 \times 6}{360 \times 100}$			23	92		
					17023	92		1675000
								87500
1881								
Յուլիս	1	Մնացորդ հին հաշուից . .			5023	92		

*) Պարտապանին օրէնքով 10 օր պայմանաժամից աւելորդ վիճաց է տրվում մուրհակի փոխը վճարելու համար:

...ով, որ փակուած է 30-ին Յունիսի, 6%-ով։

...ՀԱՇԻՒ

...ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑԻ

ՊԱՀԱՆՋԻ

Ամիս	Թիւ		Պայմանաժամ		Դրամագլուխ	Օր	% Թիւ
1881							
Յունվար	1	Ստացուած է Զեզնիից կանխիկ դրամ	Յունվար	1	8500 —	179	1521500
Մարտ	10	Ստացուած է Զեզնիից մուրհակ 6 ամիս պայմանաժամով	Օգոստ.	20	1000 —	50	50000
Մայիս	15	Ստացուած է Զեզնիից մուրհակ 2 ամիս պայմանաժամով	Յուլիս	25	1500 —	25	37500
Յունիս	20	Ստացուած է Զեզնիից կանխիկ դրամ	Յունիս	20	1000 —	10	10000
»	30	Կշիռ. սև. % Թուերի . . .					143500
»	30	Մնացորդ ի նոր հաշիւ . .			5023 92		
					17023 92		1675000
							87500

**) Նոտարագիր Թուերը խակապէս պէտք է կարդիր Թանաքով տպուած լինէին։

№ 9. Նախընթաց հաշիւը փակուած է անուղիղ եղանակով։

ԸՆԹԱՑԻԿ

Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ

ՊԱՐՏՔ

Ամիս	Թիւ		Պայմանաժամ		Դրամագլուխ	Օր	% Թիւ
1881							*)
Յունվար	10	Մախսուած է Զեզ ապրանք	Յունվար	10	3000 —	10	300
Փետր.	25	Տուած է Զեզ կանխիկ դրամ	Փետր.	25	8000 —	55	4400
Ապրիլ	20	Տուած է Զեզ մուրհակ 3 ամիս պայմանաժամով . .	Յուլիս	30	2500 —	210	5250
Մայիս	5	Վճարուած է Ձեր հրամանի համեմատ	Մայիս	5	1500 —	125	1875
»	25	Մախսուած է Զեզ ապրանք	»	25	2000 —	145	2900
Յունիս	30	Կշիռ. % Թուերի					1435
»	30	Մնացորդ %-ի $\frac{1435 \times 6}{360}$			23 92		
					17023 92		16160
1881							
Յուլիս	1	Մնացորդ հին հաշուից . .			5023 92		

*) Մեծ գումարները չը սահմանալ համար ընդունուած է առհասարակ ցնցել % կատարածները մեկ ամբողջի տեղ ընդունել։

ՀԱՇԻՎ

ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑԻ

ՊԱՀԱՆՋԻ

Ամիս	Թիվ		Պայմանաժամ	Դրամագլուխ	Օր	% թիվ
1881						
Յունվար	1	Ստացուած է Զեզնից կանխիկ դրամ	Յունվար 1	8500 —	1	85
Մարտ	10	Ստացուած է Զեզնից մուրհակ 6 ամիս պայմանաժամով	Օգոստ. 20	1000 —	230	2300
Մայիս	15	Ստացուած է Զեզնից մուրհակ 2 ամիս պայմանաժամով	Յուլիս 25	1500 —	205	3075
Յունիս	20	Ստացուած է Զեզնից կանխիկ դրամ	Յունիս 20	1000 —	170	1700
»	30	Մնացորդ դրամագլխոնների 5000 ման.			18	9000
»	30	Մնացորդ ի նոր հաշիւ . .		5023 92		
				17023 92		16160

Թուերի մէջ երկու վերջին զերոն. իսկ եթէ դրամ զերոներ չեն լինի, պէտք է 1/10-ից աւելի

№ 11. Հաշիւը փակուած է 30-ին Յունիսի 1881 թ. մին

Պ. ՄԻՆԱՍ

ՆՈՐԱ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՒԸ

ՊԱՐՏՔ

Ամիս	Թիւ		Պայմանաժամ		Դրամագլուխ		Օր	% Ի խ.
1881								
Յունվար	27	Զէկ № 1	Յունվար	27	450	—	153	68850
Փետր.	11	» » 2	Փետր.	11	270	—	139	37530
»	23	» » 3	»	23	100	—	127	12700
Մարտ	16	» » 4	Մարտ	16	375	—	104	39000
Ապրիլ	9	» » 5	Ապրիլ	9	120	—	81	9720
»	15	» » 6	»	15	150	—	75	11250
		Մնացորդ 20-ի Ադելի . . .			*1835*	—		*308600*
Մայիս	10	Զէկ № 7	Մայիս	10	150	—	50	7500
»	25	» » 8	»	25	250	—	35	8750
Յունիս	12	» » 9	Յունիս	12	300	—	18	5400
»	15	» » 10	»	15	1000	—	15	15000
		Տոկոս 4% Բանկի						*56100*
»	30	Մնացորդ դրամագլխի ի Նոր Հաշիւ			3085	—		
					6250	—		

չև 20-ին Ապրիլի $3^1/_2$%-ով, իսկ Ապրիլի 20-ից 4%-ով։

ՊԵՏՐՈՍԵԱՆՑ

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՐԻՄ

ՊԱՀԱՆՋԳԻ

Ամիս	Թիվ		Պայմանաժամ		Դրամագլուխ		Օր	% Թվ.
1881								
Յունվար	5	Տարուած է բանկը . . .	Յունվար	6	1500	—	174	261000
»	28	» » . . .	»	29	750	—	151	113250
Մարտ	11	» » . . .	Մարտ	12	1050	—	108	113400
Ապրիլ	24	Տարուած է բանկը . . .	Ապրիլ	25	900	—	65	58500
Յունիս	4	» » . . .	Յունիս	5	1200	—	25	30000
»	24	» » . . .	»	25	850	—	05	4250
					6250	—		
1881								
Յուլիս	1	Մնացորդ դրամագլխի հին հաշուից			3085	—		
		1835 մանէթի 70 օրուայ շահը $^1/_2$%-ով	1	78				
		Մնաց. %-ի $\frac{308600\times7}{2\times360\times100}$	30	—				
		Մնացորդ %-ի $\frac{56100\times4}{360\times100}$	6	23	38	01		
					3123	01		

№ 12. Հաշիւը փակուած է առաջընթաց

Պ. ՄԻՆԱՍ

ՆՈՐԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՒԸ

ՊԱՐՏՔ

Ամիս	թիւ		Պայմանագիր		Դրամագլուխ		Օր	% Թիւ
1881								
Ցունվար	27	Զէկ № 1	Ցունվ.	27	450	—	83	37350
Փեբր.	11	» » 2	Փեբր.	11	270	—	69	18630
»	23	» » 3	»	23	100	—	57	5700
Մարտ	16	» » 4	Մարտ	16	375	—	34	12750
Ապրիլ	9	» » 5	Ապրիլ	9	120	—	11	1320
»	15	» » 6	»	15	150	—	5	750
»	20	Մնացորդ է նոր հաշիւ . .			1835	—		180150
					3300	—		256650

(Շարունակութիւն) Հաշիւը

Մայիս	10	Զէկ № 7	Մայիս	10	150	—	50	7500
»	25	» » 8	»	25	250	—	35	8750
Ցունիս	12	» » 9	Ցունիս	12	300	—	18	5400
»	15	» » 10	»	15	1000	—	15	15000
»	30	Մնացորդ է նոր հաշիւ . .			3085	—		184550
					4785	—		221200

եղանակով 20-ին Ապրիլի, $3^1/_2$%-ով։

ՊԵՏՐՈՍԵԱՆՑ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ

ՊԱՀԱՆՋԳԻ

Անխ.	Թիւ		Պայմանաժամ		Դրամագլուխ		Օր	% Թիւ
1881								
Յունվ.	5	Տարուած է բանկը . . .	Յունվար	6	1500	—	104	156000
»	28	» » . . .	»	29	750	—	81	60750
Մարտ	11	» » . . .	Մարտ	12	1050	—	38	39900
					3300	—		256650

փակուած է 30-ին Յունիսի, 4%-ով։

Ապրիլ	20	Մնացորդ հին հաշուից . .	Ապրիլ	20	1835	—	70	128450
»	24	Տարուած է բանկը . . .	»	25	900	—	65	58500
Յունիս	4	» » . . .	Յունիս	5	1200	—	25	30000
»	24	» » . .	»	25	850	—	5	4250
					4785	—		221200
1881								
Յուլիս	1	Մնացորդ դրամագլխի հին հաշուից			3085	—		
		20 Ապրիլի Մնաց. %-ի $\frac{180150\times7}{2\times360\times100}$	17	51				
		30 Յունիսի Մնաց. %-ի $\frac{184550\times4}{360\times100}$	20	50	38	01		
					3123	01		

№ 13. Հաշիւը փակուած է 31-ին Դեկտեմբերի, 1881 թ.

Պ. ՄԻՆԱՍ

ՆՈՐԱ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՒԸ

ՊԱՐՏՔ

Ամիս	Թիւ		Պայմանաժամ		Դրամագլուխ		Օր	% Թիւ
1881								
Յուլիս	5	Հէկ № 11	Յուլիս	5	500	—	175	87500
»	24	» » 12	»	24	250	—	156	39000
Օգոս.	12	» » 13	Օգոս.	12	300	—	138	41400
»	20	» » 14	»	20	560	—	130	72800
Սեպ.	7	» » 15	Սեպ.	7	280	—	113	31640
»	16	» » 16	»	16	625	—	104	65000
		Մնացորդ 25-ին Սեպտեմբերի . .			*1608*	*01*		*361679*
Հոկտեմ.	15	Հէկ № 17	Հոկտեմ.	15	260	—	75	19500
Նոյեմ.	1	» » 18	Նոյեմ.	1	115	—	59	6785
»	27	» » 19	»	27	150	—	33	4950
Դեկ.	8	» » 20	Դեկ.	8	275	—	22	6050
»	14	» » 21	»	14	400	—	16	6400
		Կէտ՝ 4% բաժէն						*102765*
»	31	Մնացորդ դրամագլխի ի նոր հաշիւ			3458	01		
					7173	01		

*) Մեծ %-ի թուերը չը սահմանու. համար ընդունված է, այն գումարներին մէջ, որոնք ներ են, բաւորովին փոքր. իսկ մեկ ամբողջ թիւ համարել, եթէ նոքա 1/2-ից մեծ կատարակ

մինչև 25-ն Սեպտեմբերի 5%-ով, իսկ Սեպտեմբերի 25-ից 4%-ով։

ՊԵՏՐՈՍԵԱՆՑ

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ

ՊԱՀԱՆՋՔ

Ամիս	Թիվ.		Պայմանաժամ		Դրամագլուխ		Օր	% Թիվ.
1881								
Ցուլիս	1	Մնացորդ նախընթաց հաշուից	Ցուլիս	1	3123	01	179	*)559019
Օգոս.	9	Տարուած է բանկը . . .	Օգոս.	10	1000	—	140	140000
Սեպ.	25	Տարուած է բանկը . . .	Սեպ.	26	800	—	94	75200
Նոյեմ.	14	» » . . .	Նոյեմ.	15	1500	—	45	67500
Դեկ.	24	» » . . .	Դեկ.	25	750	—	5	3750
					7173	01		
1882								
Յունվար	1	Մնացորդ դրամագլխի հին հաշուից			3458	01		
		Մնացորդ %-ի $\frac{361679\times5}{360\times100}$	50	23				
		» %-ի $\frac{102765\times4}{360\times100}$	11	42				
			61	65				
		Դուրս գալ 1608 մ. 01 կ. 95 օրուայ շահը 1 %-ով.	4	24	57	41		
					3515	42		

*) կուպոնները կան, երկու վերջի թուանշանները, եթէ նորա վերջները կամ ½-ից մանը կոտորակները են նեբկայացնում։

№ 14. Հաշիւը փակուած է առաջընթաց

Պ. ՄԻՆԱՍ

ՆՈՐԱ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՒԸ

ՊԱՐՏՔ

Ամիս	Թիւ		Պայմանաժամ		Դրամագլուխ		Օր	% Թիւ
1881								
Յուլիս	5	Զէկ № 11	Յուլիս	5	500	—	80	40000
»	24	» » 12	»	24	250	—	61	15250
Օգոս.	12	» » 13	Օգոս.	12	300	—	43	12900
»	20	» » 14	»	20	560	—	35	19600
Սեպ.	7	» » 15	Սեպ.	7	280	—	18	5040
»	16	» » 16	»	16	625	—	9	5625
»	25	Մնացորդ ի նոր հաշիւ . .			1608	01		208918
					4123	01		307333

(Շարունակութիւն) Հաշիւը

Հոկտեմ.	15	Զէկ № 17	Հոկտեմ.	15	260	—	75	19500
Նոյեմ.	1	» » 18	Նոյեմ.	1	115	—	59	6785
»	27	» » 19	»	27	150	—	33	4950
Դեկ.	8	» » 20	Դեկ.	8	275	—	22	6050
»	14	» » 21	»	14	400	—	16	6400
»	31	Մնացորդ ի նոր հաշիւ . .			3458	01		255526
					4658	01		299211

եզանակով 25-ին Սեպտեմբերի, 5%-ով։

ՊԵՏՐՈՍԵԱՆՑ

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ

ՊԱՀԱՆՋԳԻՐ

Ամիս	Թիվ		Պարմանագրի համար		Դրամագլուխ		Օր	% Թիվ
1881								
Յուլիս	1	Մնացորդ նախընթաց հաշուից	Յուլիս	1	3123	01	84	262333
Օգոս.	9	Տարուած է բանկը . . .	Օգոս.	10	1000	—	45	45000
					4123	01		307333

փակուած է 31-ին Դեկտեմբերի, 4%-ով։

Սեպ.	25	Մնացորդ հին հաշուից .	Սեպ.	25	1608	01	95	152761
»	25	Տարուած է բանկը . . .	»	26	800	—	94	75200
Նոյեմ.	14	» » . . .	Նոյեմ.	15	1500	—	45	67500
Դեկ.	24	» » . . .	Դեկ.	25	750	—	5	3750
					4658	01		299211
1882								
Յունվար	1	Մնացորդ դրամագլխի հին հաշուից			3458	01		
		Մնացորդ %-ի $\frac{208918\times5}{360\times100}$	29	02				
		» %-ի $\frac{255526\times4}{360\times100}$	28	39	57	41		
					3515	42		

Прогрессивный текущій счетъ,

ГОСПОДИНЪ СОКОЛОВЪ

ДЕБЕТЪ.

Мѣс.	Чис.		Суммы		Дни	% чис.
1882						
Янв.	1	Продано Вамъ товаровъ.	500	—	179	89500
„	24	Выдано Вамъ наличными	250	—	156	39000
Февр.	12	Заплачено по Вашему приказу	300	—	138	41400
Апр.	20	Заплачено по Вашему приказу	560	—	70	39200
Май	7	Продано Вамъ товаровъ.	283	—	53	14999
„	31	Выдано Вамъ наличными	200	—	30	6000
Іюнь	30	Балансъ % чиселъ . .				41901
„	30	Остается за нами. . .	712	82		
			2805	82		272000

заключенный 30 Іюня по 5%.

СЕРГѢЙ НИКОЛАЕВИЧЪ.

КРЕДИТЪ.

Мѣс.	Чис.		Суммы		Дни	% чис.
1882						
Янв.	10	Получено отъ Васъ . .	700	—	170	119000
Мартъ	10	Куплено у Васъ товаровъ	1000	—	110	110000
„	30	Получено отъ Васъ . .	300	—	90	27000
Іюнь	10	„ „ „ . .	800	—	20	16000
„	30	Остатокъ % $\frac{41901}{7200}$	5	82		
			2805	82		272000
1882						
Іюль	1	Остается за нами . .	712	82		

COMPTE COURANT DE M-r

Arreté au 1 Janvier

DOIT.

Dates			Sommes		Jours	Nombres
1881						
Août	5	Mes payements	5000	—	145	7250
Septemb.	12	„ „	10000	—	108	10800
Octobre	15	Pour la vente à lui faite.	5600	—	75	4200
Décemb.	13	Payé pour s/c. à M-r Mirzayantz	1800	—	17	306
„	31	Balance des nombres .				11259
„	31	Solde créditeur	11287	65		
			33687	65		33817

A. ANDRÉ FILS, à PARIS.

1882, à 6% l'an.

AVOIR.

Dates			Sommes		Jours	Nombres
1881						
Juillet	2	Ses payements	8000	—	178	14240
Septemb.	5	Reçu pour s/c. de M-r Stieglitz	7000	—	115	8050
Octobre	12	Pour sa vente faite à moi.	10000	—	78	7800
Novemb.	15	Ses payements	8000	—	45	3600
Décemb.	5	Pour la vente faite à moi.	500	—	25	125
„	31	Intérêts sur la balance des nombres $\frac{11259}{60}$ . .	187	65		
			33687	65		33815
1882						
Janvier	1	Solde créditeur, à nouveau.	11287	65		

№ 10. Ընթացիկ հաշիւ, ուր Պարտքի գումարները հաշուած են 6%-ով, իսկ Պահանջքի — 4%-ով։

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՒ

Պ. ՅԱԿՈԲ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

Ամիս	թիւ		Դրամագլուխ			Օր	Պարտք 6 տոկոսով		Պահանջք 4 տոկոսով	
1881										
Յունվար	1	Տուած է Զեզ	5000	—	Մինչև 10 Յունվարի . .	9	7	50	—	—
»	10	Ստացուած է Զեզնից . .	7000	—						
			2000	—	Մինչև 24 Փետրվարի . .	44	—	—	9	78
Փետր.	24	Տուած է Զեզ	2500	—						
			500	—	Մինչև 10 Մարտի . . .	16	1	33	—	—
Մարտ	10	Ստացուած է Զեզնից . .	4000	—						
			3500	—	Մինչև 20 Մայիսի . . .	70	—	—	27	22
Մայիս	20	Տուած է Զեզ	3000	—						
			500	—	Մինչև 30 Մայիսի . . .	10	—	—	—	56
»	30	» »	2000	—						
			1500	—	Մինչև 5 Յունիսի . . .	5	1	25	—	—
Յունիս	5	Ստացուած է Զեզնից . .	8000	—						
»	30	Մեր պարտքի մնացորդը .	6500	—	Մինչև 30 Յունիսի . . .	25	—	—	18	06
		Մնացորդ տոկոսների . .	45	54			10	08	55	62
					Տարբերութիւն տոկոսների Զեր օգտին	—	45	54	—	—
		Մնացորդ ի նոր հաշիւ . .	6545	54			55	62	55	62

ԱՌԵՒՏՈՒՐ, ԱՊՐԱՆՔ ԵՒ ԴՐԱՄ

Կար մի ժամանակ, երբ ամեն մէկ գերդաստան իր սեպհական ոյժերով էր բաւականութիւն տալիս իր բոլոր պիտոյքներին։ Այդ այն ժամանակն էր, երբ այժմեան քաղաքակրթուած ժողովուրդները դեռ զարգացման ամենաստորին աստիճանի վրայ էին։ Այդ վաղուց անցած օրերում՝ չը կային ոչ ծախողներ և ոչ գնողներ. ամեն մէկ անհատ ինքն էր պատրաստում իր համար հարկաւոր բաները՝ հացը, կօշիկը, շորերէնը և այլն։ Քանի որ մի գերդաստանի պիտոյքները շատ քիչ էին, քանի որ մարդուս հարկաւոր բաները պարունակվում էին գլխաւորապէս երկու առարկաների մէջ, այն է հացի և հանդերձի մէջ, այն ժամանակ, ի հարկէ, կարող էր գոյութիւն ունենալ մի այդպիսի պարզ տնտեսութիւն։ Բայց մարդը մի ստիճան զարգացման վրա չէ մնում. հասարակութիւնը օրից օր զարգանում է և զարգացման հետ աւելանում են և նրա պիտոյքները։ Այսօր նա բաւականանում է հացով և հանդերձեղէններով, վաղը նրա միտքը աւելի զարգացած լինելով, նրան հարկաւոր են գալիս ուրիշ բաներ՝ տուն, գիրք և այլն։ Առաջ նա ունէր միայն նիւթական պահանջներ, բայց այժմ նա ունի և հոգեկան պահանջներ։ Նրա պիտոյքները աւելանալով, բազմանալով, նա չէր կարող լրումն տալ նոցա՝ տնտեսական առաջվայ ճանապարհով։ Նա տեսաւ նախ՝ որ չէ կարող ինքն պատրաստել այն բոլորը, ինչ որ նրան հարկաւոր է և երկրորդ՝ նա տեսաւ, որ ամեն մէկ մարդ առհասարակ մի տեսակ ընդունակութիւն ունի։ Նա եկաւ այն եզրակացութեանը, որ աւելի լաւ է մի բան պատրաստել, մի գործով զբաղվել, որովհետև այդպիսով

նա աւելի արդիւնաւոր կարող է կացուցանել թէ իր ժամանակը և թէ իր աշխատանքը։ Օրինակ, եթէ մէկը պարապվի կօշիկ կարելով միայն, նա վարժվելով մի այնպիսի հմտութիւն կը ստանայ իր արհեստի մէջ, որ աւելի լաւ կօշիկներ կը կարի և նոյն ժամանակամիջոցում աւելի մեծ քանակութեամբ կօշիկներ կը կարի, քան թէ նա, որ պիտի համ կօշիկ ու շոր կարի, համ իր համար ճաշ պատրաստի, համ էլ հացար մի տեսակ ուրիշ պարապմունքներով զբաղվի։ Ահա այսպէս հասարակութիւնը հասաւ պարապման բաժանման գաղափարին (раздѣленіе занятій)։ Կօշկակարը սկսեց կարել կօշիկ ոչ թէ միայն իր սեփական գործածութեան համար, այլ և իր շրջակայ մարդկանց համար. նա աւելորդ կօշիկները տալիս է ուրիշներին և ստանում է փոխարէնը ինչ որ իրան հարկաւոր է և ինչ որ ինքն չ'ունի, այսինքն հաց, շոր, գիրք և այլն։ Պարապմանց բաժանման սկզբունքը առաջ գործ է դրվում, ի հարկէ, մի նեղ շրջանի մէջ. սկզբում միայն հարեւան գերդաստաններն են օգուտ քաղում գործանից, յետոյ նոյն սկզբունքը գործ է դրվում ամբողջ գիւղում, և հետզհետէ աւելի ևս ընդարձակվելով, սկսվում է գործ դրվել աշխարհի բոլոր քաղաքակրթված ժողովուրդների մէջ։ Այդ ժամանակ մարդիկ նկատում են մի ուրիշ բան էլ. օրինակ, կօշկակարը տեսնում է, որ շատ ժամանակ է կորցնում ման գալով այն անձանց եռուից, որոնց որ կօշիկ է հարկաւոր, և որոնք ունեն այնպիսի բաներ, որ կօշկակարին են հարկաւոր։ Աւելի լաւ չէր լինի, մտածում է նա, որ լինէին առանձին մարդիկ, որոնք միայն դարանով զբաղվէին. այն է՝ առնէին կօշկակարից նրա կօշիկները և ծախէին նրանց վրայ, ում որ կօշիկ է հարկաւոր։ Այդպիսով առաջ է գալիս մի առանձին տեսակ գործողութիւն, որ կոչվում է առևտուր—այսինքն առնել, գնել մէկից և տալ, ծախել մի ուրիշին. գնել արդիւնարերողից (производитель) և ծախել սպառողի վրա (потребитель). Նոքա, որոնք որ նուիրում են իրանց այդ գործողութեանը, կոչվում են առևտրականներ կամ վաճառականներ։ Իսկ այն

առարկաները, որոնց վաճառականը գնում և ծախում է, կոչվում են ապրանք։

Իւրաքանչիւր մարդ ունի զանազան տեսակ պիտոյքներ, որոնց բաւականութիւն տալու համար նա պէտք է աշխատի։ Այն աշխատանքը, որը նպատակ ունի լրումն տալ մարդու նիւթական պիտոյքներին, կոչվում է արդիւնաբերութիւն։ Արդիւնաբերութիւնը երեք տեսակի է բաժանվում՝ նախնական նիւթեր հայթհայթող արդիւնաբերութիւն (первоначальная или естественная), արուեստական կամ ձեռագործական արդիւնաբերութիւն (обработывающая или мануфактурная) և փոխադրական (мѣновая) արդիւնաբերութիւն կամ առևտուր։

Առաջին արդիւնաբերութիւնը արտադրում է հում առարկաներ, օրինակ՝ ցորեն, բուրդ, բամբակ, զանազան տեսակ հանքեր և այլն։ Երկրորդ արդիւնաբերութիւնը մշակում է արուեստական կերպով, գործարաններում, այդ հում, նախնական նիւթերը և տալիս է դոցա այլ ձև և այլ բնակութիւններ, ինչպէս բամբակեայ հիւսուածք, երկաթի, պղնձի գործուածք, մետաքսեղէն և այլն։ Իսկ առևտուրը պարապում է երկու նախընթաց արդիւնաբերութիւնների արտադրած առարկաների փոխանակութեամբ։ Հին ժամանակներում առևտուրը կատարվում էր ապրանքների փոխանակութեամբ. այսինքն մէկ առարկայ փոխվում էր միւս առարկայի վրայ.... աւելորդ ապրանք ունեցողը տալիս էր ուրիշին և փոխարէնը ստանում էր իւր համար աւելի պէտքական. սկզբնական ժողովուրդները փողի մասին հասկացողութիւն չունէին։ Այդ տեսակ առևտուրը երկար տևողութիւն չէր կարող ունենալ, որովհետև դժուարանից մեծ դժուարութիւններ են առաջ գալիս։ Ապրանքները որոշ գին չունէին և իւրաքանչիւր փոխանակութեան ժամանակ անհրաժեշտ էր նախ և առաջ որոշել փոխանակվող ապրանքների համեմատական գին։ Բացի այդ, մէկի աւելորդ ապրանքը կարող է ուրիշի համար պէտքական չը լինել։ Կոշկակարը որ մի զոյգ կօշիկ է պատրաս-

տել այն լուսով, որ կը փոխանակի նորան միւս իրան պէտ-քական առարկաների հետ, օրինակ հացի հետ, կարող է սո-վից մեռնել, մինչև որ հանդիպի այն մարդուն, որ ցանկա-նար հաց ծախել և կոշիկ առնել. միևնոյն ժամանակ կոշ-կակարը հարկաւորութիւն չունի միանգամից այնքան հաց ստանալ, որքան որ արժէ մի զոյգ կոշիկը, իսկ կոշիկը մաս մաս բաժանել անկարելի է. ահա այս պատճառով մարդիկ պարտաւորվեցան ապրանքների արժէքը որոշելու համար գոր-ծածել այնպիսի առարկաներ, որ ամենքի համար ընդունելի լինէին և իրանց արժէքը չը կորցնէին։ Այսպէս հին յոյները և հռովմայեցիք փոդի տեղ գործ էին ածում եղներ, հին գեր-մանացիք — ձիաներ, Ռուսաստանում երկար ժամանակով ապ-րանքների արժէքը որոշվում էր մորթով. այսօր իսկ զրզղները և օսերը նոյն նպատակի համար գործ են դնում տաւարը, Աֆրիկայի արևմտեան եզերաբնակ ժողովուրդը — մի տեսակ խեցի, որին ֆէշ- են կոչում, Արէսինիայում — աղէքար, Վիրգի-նիայում — ծխախոտ, Մէկսիկայում - կակաո հատիկներ, Հուդ-զօնի ծոցի մօտ բնակվող ժողովուրդները — բէշկի մորթիներ, Սիամ և Բէնգալեան ծովածոցի եզերքի բնակիչները — գեղեցիկ խխունջներ, Պարսկաստանի թափառական ցեղերը — ցորեն և բուրդ, մոնգօլները — զալմուղի թէլ և այլն և այլն. բայց այդ բոլոր նիւթերը, որ զանազան ժամանակներում զանազան ժո-ղովուրդները փոդի տեղ գործ էին դնում, մեծ անյարմարու-թիւններ ունէին։ Եզը և ոչխարը չէր կարելի հեշտութեամբ մէկ տեղից միւս տեղը տեղափոխել, նոցա չէր կարելի ոչ գրբ-ղանը դնել, ոչ էլ մանր կտորների բաժանել և եթէ բաժա-նուէին մինչև անգամ, այդ կտորները չէր կարելի երկար ժամանակ պահպանել։ Միւս բոլոր առարկաները նոյն անյարմարութիւններն են ներկայացնում՝ կամ նոքա ժամանակի ազդեցութիւնից փչանում և իւրեանց արժէքը կորցնում են, կամ նոքա կտոր կտոր չեն կարող բաժանուել, կամ նոցա տեղից տեղ փոխադրելը դժուար է, կամ նոքա այնքան շատ են դանվում, որ նոցա գինը աննշան է դառնում, ուստի այդ տեսակ

փողի մեծ քանակութիւն է պէտք լինում մի փոքր ինչ մեծ բան գնելու համար, ինչպէս տուն, կով և այլն։

Այդ իսկ պատճառներով գրեթէ բոլոր քաղաքակրթուած ժողովուրդները դիմում են այժմ նոյն նպատակի համար մետաղներին և առաւելապէս գործ են ածում ապրանքների արժէքը որոշելու համար արծաթը և ոսկին։ Մետաղները, իբրև փոխանակութեան գործիք, իբրև առարկաների արժէքը չափելու միջոց, մեծ առաւելութիւններ ունեն։ Մետաղները կարելի է մանր կտորների բաժանել, որոնք այնու ամենայնիւ իւրեանց իսկական արժէքը չեն կորցնի, այլ իւրաքանչիւր կտորի արժէքը իւր կշռի համաչափ կը լինի. բացի այդ, հարկաւոր եղած ժամանակը կարելի է կտորները նորից հալելով միացնել։ Մետաղները դիմացկուն են. նոցա չեն ենթարկվում ոչ տեղի, ոչ էլ ժամանակի ազդեցութեան, նոցա կարելի է պահպանել այնքան ժամանակ, որքան մարդ կամենայ, հետևաբար և կարելի է նոցա դիզել։ Մետաղները, թէպէտ և փոքր բովանդակութեամբ, բաւական մեծ արժէք ունեն, այնպէս որ մարդ կարող է նոցա յարմարութեամբ ման ածել իւր հետ գրպանում. նոցա փոխադրելը մէկ տեղից միւս տեղ հեշտ և էժան է նստում։ Մետաղները, բացի փոխանակութիւնները հեշտացնելու լաւ միջոց լինելուց, բաւականութիւն են տալիս և մարդու մի քանի պիտոյքներին. օրինակ, ոսկին և արծաթը ծառայում են ոչ միայն իբրև փող, այլ իբրև զարդարանքի նիւթ. ուրեմն դոքա ամեն մարդու աչքում էլ գին կ՚ունենան և ամեն մարդ էլ նոցանով կը փոխէ իւր ապրանքը։ Միևնոյն ժամանակ մետաղների, մանաւանդ ազնիւ մետաղների արժէքը շատ քիչ է փոփոխութեան ենթակայ, որովհետև նոքա մեծ քանակութեամբ չեն գտնվում և նոցա արուեստական կերպով անկարելի է արտադրել։

Սկզբում մետաղները գործ էին ածում կտոր կտոր, ծանրութեանը նայելով. հարկաւոր եղած ժամանակը կտրում էին և կշռելով որոշում էին կտորի արժէքը (այդ ձևով մետաղները գործ էին ածվում մինչև վերջին ժամանակները Չինաս-

տանում)։ Այդ տեսակ փողի գործածութիւնը անպարմար լինելով, մարդիկ մտածեցին միաչափ դրամներ կտրել և որպէս զի իւրաքանչիւր անհատ նոցա գինն իմանայ՝ նոցա վրա գրշմում էին նոյն կտորի արժէքը։ Վերջապէս այնպէս սովորութիւն ընկաւ, որ ամէն տէրութիւն հրատարակած դրամների վրայ իր դրոշմը կնքում էր, որ ճանաչուէր ումը լինելը։ Դրամ կոչվում է այժմ մի լայնի քանակութիւն ոսկու կամ արծաթի, որ ունի որոշ քաշ, որոշ ձև և որոշ արժէք։ Դրամները իրանց անուանները զանազան հանգամանքներից են ստացել՝ կամ քաշից, ծանրութիւնից (լիվր) կամ մետաղից, նիւթից (Գուլդէն—Gold բառից, որ նշանակում է ոսկի) կամ տեղից (Տալեր—Thal բառից, որ նշանակում է հովիտ), կամ այն պատկերներից, որ նոցա վրա դրոշմված են (Կրոնա—Krone բառից՝ որ նշանակում է թագ), (Ֆլորին - Fleur բառից, որ նշանակում է ծաղիկ) և այլն։

Դրամները մեծ մասամբ կտրում են ազնիւ մետաղներից, այն է ոսկուց և արծաթից, բայց և գոքա մաքուր, առանց խառնուրդի երբէք չեն գործ ածվում, որովհետև շատ կակուղ են և դոցանից շինուած դրամները շուտով կը փչանային, կը մաշուէին և իւրեանց քաշը կը կորցնէին։ Նոցա պնդացնելու և դիմացկութիւն տալու համար հալում են պղնձի, արճիճի և այլ մետաղների հետ. այդ աւելացրած մետաղը կոչվում է լիգատուրա և նորա քանակութիւնը մի որ և իցէ հալուածքի մէջ իմանում են փորձով։ Փորձ կամ պրոբէ կոչվում է զուտ արծաթի կամ ոսկու քաշը, որ գտնվում է մի գրվանքայ հալուածքի մէջ։ Օրինակ, եթէ ասում են դրամը 82 պրոբանի արծաթից է կտրուած, այդ նշանակում է որ մի գրվանքայ կամ 96 մսխալ խառնուրդի մէջ—82 մսխալը զուտ արծաթ է, իսկ մնացած 14 մսխալը լիգատուրա է։

Վերցնենք մի այլ օրինակ՝ միասին հալեցին 7 գրվանքայ զուտ արծաթ 1 գրվանքայ պղնձի հետ։ Ո՞ր փորձի դուրս եկաւ հալուածքը։

Այդ հարցը վճռելու համար դատում ենք այսպէս՝

8 գրվ. խառնուրդի մէջ կայ 7 գրվ. մաքուր արծաթ

1 » » » » $^7/_8$ » » արծաթ, իսկ

96 մսխալ » » » $\frac{96\times7}{8}=84$ մսխալ արծաթ, ուրեմն հալուածքը կը լինի 84 փորձի։

Երբ հարկաւոր է լինում վճռել, թէ քանի պրօբանի դուրս կը գալ հալուածքը, եթէ լայնի է խառնելի մետաղների քանակութիւնը և նոցա արժանաւորութիւնը, դիմում են խառնուրդի կանոնին։

Օրինակ, ոսկերիչը հալեց 3 գրվանքայ 84 պրօբանի արծաթ 2 գրվանքայ 48 պրօբանի արծաթի հետ։ Քանի պրօբանի դուրս եկաւ հալուածքը։ Մեզ լայնի է, որ պրօբ կոչվում է զուտ արծաթի կամ ոսկու մսխալների թիւը, որ գտնվում է մի գրվանքայ հալուածքի մէջ. այդ պատճառաւ էլ կը գտնենք՝

3 գրվ. 84 պրօբանի արծաթի մէջ կայ $84\times3=252$ մ. զուտ արծաթ։

2 գրվ. 48 պրօբանի արծաթի մէջ կայ $48\times2=96$ մ. արծաթ։

Ուրեմն 5 գրվ. հալուածքի մէջ կը լինի $252+96=348$ մսխ. արծ., իսկ 1 գ. հալուածքի մէջ կը լինի $\frac{348}{5}=69\,^3/_5$ մ. արծաթ։

Այդ նշանակում է հալուածքը դուրս եկաւ $69^3/_5$ պրօբանի։

Ռուսաստանում ոսկու և արծաթի գինը զանազան տեսակ է որոշվում՝ կամ մաքուր մետաղի և կամ մի լայնի փորձի մետաղի։

Եթէ տուած է լինում մաքուր մետաղի գինը, և կամենում են գտնել մի որոշ քանակութեան հալուածքի արժէքը, պէտք է նախ և առաջ իմանալ թէ որքան զուտ մետաղ է

պարունակվում հալուածքի մէջ և լետոյ հաշուել նորան նըշանակուած գնով։

Դիցուք լինի այսպիսի խնդիր՝

Ո՞րքան արժէ 8 գրվանքալ արծաթ 84 պրոբանի, եթէ 1 գրվ. զուտ արծաթի գինն է 24 մանէթ։

Այդ խնդիրը վճռելու համար պէտք է իմանանք, թէ ո՞րքան մաքուր արծաթ կայ 8 գրվանքալ հալուածքի մէջ. դորա համար կ՝ասենք՝

1 գրվ. հալուածքի մէջ պարունակվում է 84 մսխ. արծ. իսկ 8 » » » կը լինի $8 \times 84 = 672$ » »

Այդպէս ուրեմն հալուածքի մէջ կայ 672 մսխալ մաքուր արծ. դորա արժէքը որոշելու համար դատում ենք հետևեալ կերպով՝

1 գրվանքալ կամ 96 մսխալ զուտ արծաթի գինն է 24 մանէթ, նշանակում է ուրեմն, որ 1 մսխալի գինը 96 անգամ պակաս կը լինի, այսինքն $\frac{24}{96}$, իսկ 672 մսխալի արժէքը 672 անգամ աւել է, ուստի կը ստանանք՝

$$\frac{24 \times 672}{96} = 168 \text{ մանէթ։}$$

Նոյն հարցը կարելի է դիւրին կերպով լուծել և օղակալ կանոնով։ (Տես էջ 14.)

$$\begin{array}{l} x \text{ մ.....} 8 \text{ գրվ.} \\ 96 \text{.....} 84 \\ 1 \text{.....} 24 \text{ ման.} \\ \hline x = \frac{8 \times 84 \times 24}{96} = 168 \text{ մանէթ։} \end{array}$$

Վճռենք այժմ այնպիսի խնդիր, ուր տուած է լիգատուրայի գինը։

Վաճառականը գնում է 3 գրվանքալ մաքուր արծաթ։ Ո՞րքան է դորա արժէքը, եթէ 1 գրվ. 84 պրոբանի արծաթի գինն է 21 մանէթ։

Որովհետև 1 գրվանքայ 84 պրօբանի արծաթի մէջ պարունակվում է 84 մսխալ զուտ մետաղ, ուստի 84 մսխալ մաքուր արծաթը արժէ 21 մանէթ. դարձնելով 3 գրվանքան մսխալներ, կը ստանանք $3 \times 96 = 288$ մսխալ։ Այժմ կ'ասենք՝ եթէ 84 մսխալ զուտ արծ. արժէ 21 մանէթ

1 » » » » $^{21}/_{84}$ »

իսկ 288 » » » » $\frac{288 \times 21}{84} = 72$ ման.։

Այդպէս ուրեմն վաճառականը երեք գրվանքայ մաքուր արծաթի համար պէտք է վճարի 72 մանէթ։

Միևնոյն խնդիրը, օղակաղ կանոնով լուծելու համար, հետևեալ կերպով կը դասաւորենք.

x ման. .....3 գրվ.
84 գրվ. .....96 »
1 » .....21 ման.

$$x = \frac{3 \times 96 \times 21}{84} = 72 \text{ մանէթ։}$$

Վճռենք մի քանի նոյնանման խնդիրներ։

Որքան արժէ 2 գրվանքայ ոսկի 72 պրօբանի, եթէ 1 մսխալ 88 պրօբանի ոսկու գինն է 4 մանէթ։ Որոշում ենք զուտ ոսկու քանակութիւնը 2 գրվանքայ կամ 192 մսխալ հալուածքի մէջ.

x մսխ. .....192 մսխ.
96 » 72

$$x = \frac{192 \times 72}{96} = 144 \text{ մսխալ։}$$

Այժմ պէտք է իմանալ, թէ որքան կը ստացուի 144 մսխալ ոսկու համար, եթէ 1 մսխալ 88 պրօբանի ոսկին արժէ 4 մանէթ։

Տուած թիւերը դասաւորում ենք այսպէս՝

x ման. . . . . .144 մսխ.
88 մսխ. . . . . .96 »
1 » . . . . . .4 ման.

$$x=\frac{4\times144\times96}{88}=628 \text{ մ. } 36 \text{ կոպէկ։}$$

Այդ խնդիրը կարելի է լուծել միանգամից, դասաւորելով տուած թուերը հետևեալ կերպով.

x ման. . . . . .192 մսխ.
96 մսխ. . . . . .72 »
88 » . . . . . .96 »
1 » . . . . . .4 ման.

$$x=\frac{192\times72\times96\times4}{96\times88}=628 \text{ մ. } 36 \text{ կոպէկ։}$$

Հետևեալ երկու խնդիրները վճռում ենք վերջին ցոյց տուած եղանակով։

Քանի կը լինի 5 գրվանքայ 72 պրօբանի արծաթի արժէքը, եթէ 1 գրվ. 84 պրօբանի արծաթը արժէ 22 մանէթ։

x. . . . . 5 գրվ.
96. . . . . .72 »
84. . . . . .96 »
1. . . . . .22 մ.

